ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2022 թվականի թիվ 134- Ա

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով՝

որոշում եմ՝

1. 2021 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում կատարված սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկում իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հաստատել «2021 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում ավարտված սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկում իրականացնելու նպատակով այցելությունների վերաբերյալ ժամանակացույցը» համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ իրականացնել մշտադիտարկում և թիվ 2 հավելվածի պահանջներին համապատասխան արդյունքների մասին մինչև ս/թ հունիսի 3-ը տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ լուսաբանել մշտադիտարկման ընթացքը և իրականացված աշխատանքները:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

22.04.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

22 ապրիլի 2022թ.
ք. Իջևան

«Հավելված 1»
ՀՀ Տավուշի մարզպետի
22 ապրիլի 2022թ. թիվ 134-Ա որոշման

ԿԱԶՄ
2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Խմբի ղեկավար՝

Նարեկ Ղուշչյան - ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ,

Անդամներ՝

Աղաբեկ Գալստյան - ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ,

Գուրգեն Հարությունյան - զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ,

Միսակ Մելքումյան - քաղաքաշինության վարչության պետի պարտականությունները կատարող,

Ասքանազ Բաբլումյան - ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության, ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

22.04.2022

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN ARMAN 2412760241